սը մի որ և է երկիր նուաճէ Բալկանեան թերակղզու վրա Աղրիական և Էգէյեան ծովերի ափերին։ Բարձր Հայմերլէ այդ նախագիծը ուրախութեամբ է ընդունել և բանակցութիւնները այդ նոր հսմաձայնութեան պայմանների մասին երևի շուտով կը սկսվին։ „Post“ լրագիրը հաւատացնում է, որ այդ տեղեկութիւնը նա ստացել է հաստատ աղբիւրներից։ Այդ տեղեկութեան հետ կից լրագիրները հաղորդում են, որ օգոստոսին իտալական թագաւոր Հումբերտ կուղևորվի Իշլ գերմանական և աւստրիական կայսրների հետ տեսնվելու համար։ Մի և նոյն ժամանակ իտալական „Opinione“ լրագիրը ապացուցանում է, որ անհրաժեշտ է մի դաշնագրութիւն կապել Իտալիայի և Աւստրօ-Ունգարիայի մէջ Բալկանեան գործերի մասին։

ՖՐԱՆՍԻԱ

Յուլիսի 14-ի տօնը Փարիզի մէջ մեծ շքեղութեամբ կատարվեցաւ։ Ամենքի հետաքրքրութիւնը գրաւում էր Լօնշանի զօրախաղը։ Երկրորդ ժամին սկսեցին զօրքերը հաւաքվել և իրանց տեղերը բռնել։ Այնուհետև եկան Լէօն Սէ և Գամբետտա բազմաթիւ պատուաւոր պահապաններով։ Նրանք տեղ բռնեցին պաշտօնական անձանց համար պատրաստված ծածկոցի տակ, որտեղ հաւաքվել էին օտար պետութիւնների ներկայացուցիչները և Ֆրանսիական ժողովների անդամները։ Ժամի երկուսին, թնդանօթներ արձակելով և փողեր հնչեցնելով, յայտնեցին հանրապետութեան նախագահի գալուստը։ Նախագահի կառքի մէջ նստած էր մինիստր Ֆերրի, իսկ միւս մինիստրները և բարձրաստիճան անձինք հետևում էին կառքին։ Այնուհետև եկաւ պատերազմական մինիստր Ֆարը և երաժշտութիւնը սկսեց Մարսելիեզ ածել։ Զօրախաղը այս անգամ աւելի լաւ անցաւ քան թէ անցեալ տարի։ Երևում էր, որ Ֆրանսիական զօրքերը մեծ առաջադիմութիւն էին գործել։ Հանրապետութեան նախագահը շնորհակալութիւն յայտնեց պատերազմական մինիստրին և հեռացաւ։ Ամբոխը անդադար կանչում էր „կեցցէ հանրապետութիւնը։“ Երբ վերադառնում էր Գամբետտա, ժողովուրդը պատուեց նրան, աղմկալի ցոյցեր անելով։ Սարասբուրգի արձանի առաջ ցոյցեր եղան ի յիշատակ Էլզաս-Լոտարինգիայի, բայց այս տարի այդ ցոյցերը առաջվայ պէս աղմկալի և ոգևորված չէին։ Կոմունիսաների ցոյցերն էլ անկատելի կերպով անցան։

Ալժիրից ստացված տեղեկութիւնների համեմատ Բու-Ամեմ նորից ազատվեցաւ Ֆրանսիական զօրքերի հալածանքներից։ Լրտեսները տեղեկացել են, որ նա ուղևորվել է դէպի հիւսիս արևելք, որպէս զի Ջարդի Ֆրենդի մէջ հաւաքված Ֆրանսիացիներին հաւատարիմ 1000 արաբներին։ Բու-Ամեմ իր ձեռքի տակ ունի 1200 հետևակ և 1500 հեծելազօրք։ Յունիսի բոլոր ցեղերը երդվել են ընդդիմանալ եւրօպացիներին։ Ֆրանսիացիները Յունիսի մէջ հանդիսով կատարեցին իրանց ազգային տօնը։

Ծովային մինիստրը Սֆակսից ստացաւ հեռաւոր հեռագիրը. Ֆրանսիական նաւատորմը հինգշաբթի հասաւ Սֆակս, իսկ ուրբաթ սկսեց ռմբակոծել քաղաքը և պատրաստութիւն տեսնել յարձակման համար։ Այսօր, շաբաթ, Ֆրանսիական զօրքերը յարձակվեցին Սֆակսի վրա և գրաւեցին նրան։ Ապստամբները քաջութեամբ ընդդիմադրում էին։ Ֆրանսիացիների կողմից սպանված են 8 մարդ և 40 վիրաւորված։

Մինիստրների խորհրդի մէջ ներքին գործերի մինիստր կոնստան ներկայացրեց նահանգական պրեֆեկտների գեկուցումը յուլիսի 14-ի տօնի պատճառով։ Այդ զեկուցումից երևում է, որ ազգային տօնը ամեն տեղ մեծ շքեղութեամբ է կատարվել։ Այնու ամենայնիւ մի քանի տեղ հակահանրապետական ցոյցեր են կատարված։ Ի միջի այլոց Օրանժի մէջ տեղական դատարանի նախագահը կարեց այն թելը, որի վրա պէտք է լապտերներ կապվէին դատարանը զարդարելու համար։ Հեծելազօրքի մի քանի օֆիցերներ հրաժարվեցան տօնին մասնակցելուց և արգելեցին զինուորներին դուրս գալ զօրանոցներից։ Այսպիսի դէպքեր շատ քիչ են պատահել և նրանք ոչինչ ազդեցութիւն չէին կարող ունենալ հասարակութեան վրա։

ՆԱՄԱԿ ԱԻՍՏՐԻԱՑԻՑ

Վիէննա, 12 յուլիսի

Ձեր թղթակիցը Փարիզից հաղորդած էր ձեզ, որ Երևելի Ֆրանսիացի արևելագէտ և հայագէտ պ. Դիւլօրիէ դիտաւորութիւն ունի հրատարակել Փարիզում մի ֆրանսերէն թերթ, որ լինէր Թիւրքաց հայերի չահերի պաշտպան։ Ես ինքս համակրելով այդ տեսակ գործին, բացի պ. Դիւլօրիէից, ամեն ջանք գործ դրեցի սրան նրան համոզել որ հիմնի կամ առանձին թերթ ֆրանսերէն լեզուով, որ լինէր Թիւրքաց հայերի թարգման, կամ բաց անի արդէն եղած մի օրաթերթի մէջ մի բաժին, ուր կարելի լինէր զետեղել Թիւրքաց Հայաստանին նպաստող այլ և այլ յօդուածներ։

Փարիզ եղած ժամանակս, տեղեկանալով որ կ. Պոլսի հայերը մերժել էին պ. Դիւլօրիէին որ և է նիւթական կամ բարոյական նպաստ հատկացնել իր մտադրած թերթը հիմնելու համար, տեղեկանալով մի և նոյն ժամանակ ձեր թղթակցի գրուածից որ 200 բաժանորդ բաւական էր պահպանել այդ տեսակ հրատարակութիւն, ես անձամբ դիմեցի յարգելի հայագէտին, խոստանալով վճարել իրան որ և է ճանապարհով 200 բաժանորդի գումարը։ Մի և նոյն ժամանակ պատմեցի նրան, որ «Մշակի» միջոցով արդէն արծարծվում է այդ խնդիրը ռուսահայերի մէջ։ Բաջալերվելով իմ խօսքերից պ. Դիւլօրիէ սկսեց բանակցել մի հրատարակչի հետ, բայց դժբաղդաբար գործը գլուխ չեկաւ, որովհետև յայտնվեցաւ որ մի նոր օրագիր հիմնելու համար նշանաւոր գումար է հարկաւոր։ Ապա խնդրեցի մի տարածված լրագրի խմբագրին էլ նուիրել իր ամենօրեայ թերթի մի էջ Թիւրքաց հայերի գործի պաշտպանութեանը։ Նա խոստացաւ ինձ երբեմն յօդուածներ հրատարակել, որոնք կը վարձատրվեն։

Փարիզից եկայ Վիէննա և տեսնվեցայ այստեղ հրատարակվող «Journal d'Orient» շաբաթաթերթի խմբագրի հետ։ Այդ թերթը ուղարկվում է նախարարներին, դեսպաններին և քաղաքական այլ բարձր շրջաններ։ Արևելեան խնդրի վերաբերութեամբ թերթը հետևում է Ռուսաստանին բարեկամ քաղաքականութեանը։ Խօսեցի խմբագրի հետ և սա համաձայնվեց շարունակ պաշտպանել իր թերթի մէջ Թիւրքիայի հայերին, դարձեալ ռուսաց կառավարութիւնը հայերին բարեկամ և պաշտպան ճանաչելով, ի հարկէ։

Այսօր ուղարկվեցաւ ձեզ և ուրիշներին այսօրվայ № 30, իբրև օրինակ և այս ձեով կը շարունակվի։ Միայն պէտք են բաժանորդներ և թղթակցութիւններ, լրագիրը պահպանելու համար։ Յոյս ունեմ, որ նրանք, որոնք պատրաստակամութիւն յայտնեցին Դիւլօրիէի թերթը պահպանելու, այժմ կը պահպանեն Վիէննայի «Journal d'Orient» լրագիրը, որ յանձն առաւ հայոց օրգան դառնալու։

Կարող էք այդ թերթի համար բանալ բաժանորդագրութիւն։ Գինը 8 ռուբլէ տարեկան, կամ 4 ռուբլէ կէս տարվայ, այսինքն մինչև յունվար ամիսը 1882 թվի։ Խորհուրդ եմ տալիս որ փողերը ուղարկվեն «Մշակի» խմբագրութեանը, կամ բաժանորդները կարող են փողը իրանց հասցէով ուղղակի Վիէննա ուղարկել։ Հասցէն թէ բաժանորդ գրվելու, թէ յօդուածներ հաղորդելու համար հետևեալն է Wienne (Autriche) M. F. Salles, Rédacteur en chef du «Journal d'Orient» Rauhensteingasse, 10.

Այդ թերթի խմբագրի համար դուսյ և մի թարգմանիչ հայոց լեզուից։ Կարող էք յօդուածներ ուղարկել և հայերէն լեզուով. նրանք կը թարգմանվեն։ Բայց, ի հարկէ, աւելի լաւ է եթէ յօդուածները ֆրանսերէն գրված լինեն։ Մեծ յոյս ունեմ որ «Journal d'Orient» բազմաթիւ բաժանորդներ կը գտնի ռուսահայերի մէջ, որոնք իրանց այդ տեսակ բարոյական և նիւթական նպաստով մեծ օգնութիւն կը տան պ. Սալլէսին և միջոց կը տան նրան օրինաւոր կերպով մշակելու հայոց խնդիրը։

* * *

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Յայտնի է որ տպագրութեան գիւտից առաջ գրքերը տարածվում էին գրչագիր օրինակներով և օրինակելիս շատ և շատ սխալներ էին սպրդվում նրանց մէջ։ Բոլոր հին յունաց, հռոմայեցոց և հայոց դասական հեղինակութեանց օրինակները, որ այժմ գտնվում են այլ և այլ գրատուներում, լիքն են տպագրական, կամ, աւելի ճիշտն ասել՝ ձեռագրական վրիպակներով։ Հին հռոմայեցի մատենագիր Ցերենտիոսի գրուածքներում, որոնք միայն վեց կտոր են, կան 30,000 տարբեր ընթերցուածներ։ Այս ընդհանուր վիճակից զերծ չեն մնացել և Ս. Գրքի օրինակները թէ նրա յունարէն, թէ հայերէն օրինակները, այնպէս որ այսօր էջմիածնում եղող 4–500 ձեռագիր Նոր Կտակարաններից մէկը բառ առ բառ մի և նոյնը չէ մի ուրիշի հետ. ամեն մէկն ունի իր մասնաւոր տարբեր ընթերցուածները։ Նոր Կտակարանի հին յունարէն ձեռագիրներն էլ այդպէս այլ և այլ ընթերցուածներ ունենալով, այս վերջի ժամանակներումս Ամերիկայում մի ուսումնական ժողով կայացաւ 300 տարի սրանից առաջ անգլիերէն լեզուով թարգմանված Նոր Կտակարանը բաղդատել յունարէն ամենահին և ընտիր օրինակների հետ և բատ այնմ սրբագրել անգլիերէնը։ Այդ ժողովը երկար ժամանակ անձանձիր աշխատելուց և խղճի մտօք քննելուց յետոյ ներկայացրեց անգլիերէն Նոր Կտակարանը իր տրած ինչ ինչ փոփոխութիւններով։ Ամերիկայի հռչակաւոր Չիկագօ քաղաքում հրատարակվող մեծանուն լրագիրը ակնկառոյց սպասում էր ժողովի գործն աւարտելուն և իսկոյն առաւ ձեռագիրը և այդ ամբողջ Նոր Կտակարանը մի օրվայ մէջ տպելով իր լրագրի մի համարի հետը ուղարկեց իր 200,000 տարբերակողներին իբրև յաւելուած։ Բոլոր տպուածը բռնում է 16 երես «Times» լրագրի գիրքով։ Տպելիս զբաղված էին 92 շարող և 5 սրբագրիչ. տպագրութիւնը սկսվեց առաւօտեան ժամը 10-ին և վերջացաւ երեկոյեան ժամը 10-ին։

* * *

Հնարագէտ ամերիկացիները մտադրվեցին Ատլանտեան ովկիանոսով օդային ճանապարհորդութիւն անել։ Մէկ ժողովի մէջ, Նիւ-Եօրկում, պրոֆէսոր Սամուիլ Կինգ օդագնացի բարեկամները բաւական նշանաւոր գումար հաւաքեցին օդապարիկ շինելու համար, որի վրա կարելի լինի Ամերիկայից դէպի Եւրօպա ճանապարհորդել։ Կինգ միտք ունի, գուտապերչի օգնութեամբ չը թոյլ տալ, որ օդը կարողանայ անցնել գնտակի պատերի միջից և կարծում է որ վեց օր շարունակ կարողանայ օդի վրա մնալ։

* * *

Ինչպէս յայտնի է, դեռ ապրիլի 8-ին վախճանվեցաւ Չինաստանի կայսրուհին. բայց նրա մարմնի թաղումը եկող գարունից վաղ չի մնիր։ Կայսրուհուն զմռսեցին և դագաղի մէջ պառկեցնելով, դրեցին պալատի աղօթատան մէջ։ Այնտեղ յաճախ գնում են կայսերական ընտանիքի անդամները և զոհեր են բերում հանգուցեալի նշխարներին։ Այժմ արդէն սկսվեցան ահագին պատրաստութիւններ ապագայ թաղման համար։

* * *

Վիկտոր Հիւգոյին արձան կանգնեցնելու համար կազմված մասնաժողովը հետևեալ նոր յայտարարութիւն հրատարակեց. «Փետրվարի 27-ին ամբողջ Փարիզը և Փարիզի հետ ամբողջ Ֆրանսիան և Ֆրանսիայի հետ միասին ամբողջ աշխարհը—տօնում էր ի պատիւ մեծ բանաստեղծի և մեծ քաղաքացու։ Այդ օրը ժողովուրդը պահանջեց, որ դեռ ևս կեանքի ժամանակ արձան կանգնվի Վիկտոր Հիւգոյին։ Այդ արձանը կը կանգնեցնվի ի պատիւ զարմանալի հանճարի, որ նուիրված էր ճշմարտութեան և արդարութեան գաղափարներին։» Ստորագրութիւնը յուլիսի 14-ից բացվեցաւ։

* * *

Նէյչատելում պատահած հակահրէական անկարգութիւնների մասին Վօլֆի ընկերութեանը հեռագրում են այդ քաղաքից հետևեալը. «Լրագրական երկու հրէայ աշխատակիցների և մէկ քրիստոնեայի մէջ պատահած կռիւ պատճառով, որի ժամանակ քրիստոնեան եօթը վերք ստացաւ գլխում, անցած երկու գիշերները անկարգութիւններ պատահեցան։ Հրէաների տների մի քանի ապակիներ կոտրտեցին։ Մօտ 20 կատաղիներ բանտարկված են։»

* * *

Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, որ յուլիսի 13-ին Փարիզում մեռաւ ութսուն և չորս տարեկան հասակում Ֆրանսիական ինստիտուտի անդամ և առաջին աստիճանի պատուոր լեգիոնի չքանշանի ասպետ, Շարլ Ժիրօ։ Նա Փարիզի իրաւաբանական ֆակուլտէտի պրոֆէսոր էր և բարձրագոյն կրթութեան ընդհանուր տեսուչ, և մի ժամանակ ազգային լուսաւորութեան մինիստր էր։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յուլիսի։ „Правит. Вѣстн.“ լրագրի մէջ տպված է ներքին գործերի մինիստր կոմս Իգնատիեվի հեռաւոր հեռագիրը յուլիսի 17-ից. „Թագաւոր կայսր իր Բարձր. Ընտանիքով այսօր առաւօտ հասան Մօսկվա։ Դիմաւորութիւնը ոգևորված էր։ Նրանք այցելեցին մայր եկեղեցիները և Փրկչի եկեղեցին։ Մօսկվայի քաղաքագլխից աղ և հաց ընդունելուց յետոյ Թագաւոր կայսրը ասաց. „Այն մեծ վիշտը տանելուց յետոյ, որ պատահեց ինձ, իմ ընտանիքին և ամբողջ Ռուսաստանին, ես վերջապէս բաղդաւոր եմ, որ կարողացայ կատարել իմ փափագը և այցելել հին առաջնագահ մայրաքաղաքը։ Շատ շնորհակալ եմ այն գեղեցիկ ընդունելութեան համար, որ արիք ինձ, կայսրուհուն և երեխաներիս։ Հանգուցեալ Հայրս շատ անգամ շնորհակալութիւն է յայտնել Մօսկվային նրա հաւատարմութեան համար։ Մօսկվան միշտ օրինակ է եղել ամբողջ Ռուսաստանի համար։ Ցոյս ունեմ, որ այսուհետև էլ այդպէս կը լինի և, ինչպէս առաջ Մօսկվան վկայել է, նոյնպէս էլ այժմ կը վկայէ, որ Ռուսաստանի մէջ Թագաւորը և ժողովուրդը կազմում են միահոգի և ամուր միամբողջութիւն։“

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի։ „Правит. Вѣстн.“ լրագիրը տպեց հետևեալ հեռագիրը Մօսկվայից յուլիսի 19-ից. Թագաւոր կայսրը. Թագուհի կայսրուհին և Մեծ Իշխանները այսօր այցելեցին Սերգիեվսկայա Լավրա վանքը։ Միաբօղոլիտը օրհնեց նրանց ոսկեպատ պատկերներով։ Ժողովուրդը ամեն տեղ Նրանց Մեծութիւններին ոգևորված կերպով է ընդունում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ր. 75 կ., երկրորդ 94 ր. 37 կ., երրորդ 94 ր. 75 կ., չորրորդ 94 ր. 25 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 225 ր. 50 կ., երկրորդ 224 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 92 ր. 12 կ., երկրորդ 92 ր., երրորդ 92 ր., ոսկի 7 ր. 78 կ.։ Ռուսաց 1 ռուբլի Լօնդօնի վրա արժէ 25,59 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 218 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա արժէ 269 ֆրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ